ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2024 թվական թիվ 316-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 08-061-0051-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «Ա.Գ. ԷՍԹԵՅԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված անշարժ գույքի գնահատման թիվ 11212411 հաշվետվությունը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի սեփականությունը համարվող, 08-061-0051-0022 կադաստրային ծածկագրով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հայկավան բնակավայրի 1-ին փողոց, 22 հասցեի 0,03848 հեկտար մակերեսով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և դրա վրա առկա շինությունը պահպանելու և այդ տարածքում օբյեկտ կառուցելու նպատակով՝ դասական աճուրդ-վաճառքի միջոցով օտարել:

2. Անշարժ գույքի օտարման մեկնարկային գինը հաստատել 1000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ, որը ներառում է 0,03848 հեկտար մակերեսով հողամասի կադաստրային արժեքը:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ անշարժ գույքը մեկ լոտով օտարելու նպատակով կազմակերպել հրապարակային սակարկություն:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -22 Դեմ – 0 Ձեռնպահ – 0

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ս. ՍԻՄՈՆՅԱՆ
Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ
Մ. ՄՆԱՑՅԱՆ
Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
Վ. ԱՐՇԱԿՅԱՆ
Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ
Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Ա. ԻԳԻԹՅԱՆ
Ա. ՄՔՈՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՉԱԼՈՅԱՆ
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ
Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Վ. ԹՈՐՈՅԱՆ
Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թ. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ԴՐՄԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

20 դեկտեմբերի 2024 թվական
գյուղ Ախուրյան